№ 58 ԱՊՐԻԼԻ 11 (23) 1878 ԱՊՐԻԼԻ 11 (23) № 58

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում դրվում են խմբագրատանը և պ. Թատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшака"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Վէրա Զասուլիչի գործը։ Նամակ Գանձակից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Աւստրիա։ Պարսկաստան։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։ «Մշակի հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Մասուր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԷՐԱ ԶԱՍՈՒԼԻՉԻ ԳՈՐԾԸ

—

Այս գործի մասին լրագիրներից հետևեալն ենք տեղեկանում։ Ծամի 11-ին Պետերբուրգի Նահանգական դատարանի առաջին բաժնում սկսեց քննվել գեներալ-ադիւտանտ Տրէպովի վերաւորելու գործը։ Դահլիճը սկսեց լցվել առաւօտեան տասը ժամից։ Հասարակութեան տեղերը բռնել էին բարձր դասին պատկանող մարդիկ և կանայք։ Դատաւորների եռևը երկու կարգ աթոռների վրա նստել էին դատաստանական բաժնի և բարձր վարչութեան ներկայացուցիչները, որոնց թվում նկատեցին իշխան Գորչակովին։

Հրաւիրված վկաներից չը ներկայացան գեներալ Տրէպով, Ֆեօդորովիչ, Կուպրիանով և Վօլխովսկի։

Քարտուղարը յայտնեց, որ գեներալ Տրէպով ուղարկել էր բժշկի վկայական, որտեղ ասված էր, թէ նա ոչ թէ միայն չէ կարող գալ դատարան, այլ մինչև անգամ տանը ցուցումներ անելը Տրէպովի առողջութեանը վնաս է։ Այս հիման վրա Տրէպով խնդրում էր ազատել իրան վկայութիւն տալուց։ Վկայ Ֆեօդորովիչին ուղարկված էր ազդարարութիւն, բայց անյայտ պատճառներով չը ներկայացաւ դատարանին։ Նահանգական դատարանը կանչել էր Կուպրիանովին և Վօլխովսկուն, որոնք կալանաւորված են Պետրոս-Պաւլովսկի բերդում, բայց բերդի գլխաւորը մի գրութիւն էր ներկայացրել դատարանին, որով յայտնում էր թէ առանձին կանոնների հիման վրա այդ երկու վկաները, որոնք քաղաքական յանցանքի համար են կալանաւորված, չեն ներկայանայ դատարանին։

Երկու կողմերն էլ, թէ պրոկուրորը և թէ մեղադրվածի պաշտպան, պ. Աղէքսանդրով համաձայնեցին, որ գործը կարելի է շարունակել առանց այդ վկաների։ Մի և նոյն ժամանակ պաշտպանը յայտնեց, որ ինքը գեներալ Տրէպովի խնդիրը անգործնական է համարում, իսկ կալանաւորված վկաների չը ներկայանալու մասին ասաց, որ նոքա ոչ թէ իրանք չեն եկել, այլ նրանց չեն բերել, իսկ կալանաւորվածների վերաբերեալ առանձին կանոնների մասին ոչինչ չէ կարող ասել, որովհետև այդ կանոնները իրան յայտնի չեն։

Նախագահը յայտնեց, որ գործը կարելի է շարունակել և յետոյ ընտրվեցան 12 երդուեալ դատաւորներ, որոնցից մեծ մասը ծառայողներ էին։ Երբ երդումը վերջացաւ և նախագահը դատաւորներին մեկնեց նրանց պարտականութիւնները, սկսեցին կարդալ մեղադրական ակտը, որի բովանդակութիւնը հետևեալն է։ Յունվարի 24-ին 1878 թ., Ս. Պետերբուրգի քաղաքապետի ընդունելութեան օրը Տրէպովին խնդիրք ներկայացրեց մի կին, որ իրան անուանում էր Կազլովա և երբ քաղաքապետը խնդիրը ընդունելուց յետոյ դիմեց միւս խնդրատուին, Կազլովա արձակեց ըէվոլվեր և ծանր վերաւորեց քաղաքապետին։ Կանչված բժիշկները գտան, որ վէրքը շատ վտանգաւոր է և որ կնոջից չէր կախված գեներալ Տրէպովի կենդանի մնալը։ Քննութենից երևաց, որ մեղադրվածի ազգանունն է Վէրա Զասուլիչ։ Մեղադրվածը յայտնեց, որ ինքը դիտմամբ, գեներալ Տրէպովին սպանելու համար ըէվոլվեր գնել տուեց և որ նրա համար մի և նոյն է արդեօք մեռաւ քաղաքապետը, թէ միայն վերաւորվեցաւ, որովհետև կամենում էր միայն վրէժ առնել։ Զասուլիչ բացատրեց, որ քաղաքապետի հրամանով 1877 թ. յուլիս ամսին տաժանակիր աշխատանքներին դատապարտված քաղաքական յանցաւոր Արխիպ Բօգօլիւբովին ենթարկել էին մարմնական պատժին—նրան 25 ըզգի էին խփել։ Ինքը իր սեփական փորձից իմանալով որքան ծանր է ազատութենից զրկվածի համար որ և է վիրաւորանք, վճռեց անպատճառ վրէժխնդիր լինել քաղաքապետից, միայն սպասում էր, որ օրէնքը կամ հասարակական կարծիքը նրան դատապարտէ։ Բայց որովհետև գեներալ Տրէպով անպատիժ մնաց, Զասուլիչ վճռեց նրա վրա ըէվոլվեր արձակել և այդպէսով պատժել։

ՆԱԽԱԳԱՀ. Զասուլիչ, դուք մեղադրվում էք, որ գեներալ-ադիւտանտ Տրէպովին սպանելու դիտաւորութեամբ գնացիք նրա մօտ յունվարի 24-ին և ձեր բերած ըէվոլվերը արձակեցիք նրա վրա։ Տրէպովին դուք միայն վիրաւորեցիք և նրա կենդանի մնալը ձեր կամքից չէր կախված. խոստովանում էք ձեզ մեղաւոր։

ԶԱՍՈՒԼԻՉ. Ես խոստովանվում եմ, որ ըէվոլվեր արձակեցի գեներալ Տրէպովի վրա, մի և նոյն ժամանակ ինձ համար նշանակութիւն չունէր կը մեռնէր նա, թէ միայն կը վիրաւորվէր։

ՆԱԽԱԳԱՀ. Կը կամենաք պատմել, ի՞նչից դրդված դուք այդ արեցիք։

ԶԱՍՈՒԼԻՉ. Ես կը խնդրեի թոյլ տալ ինձ յանցանքի շարժառիթները մեկնել վկաներին հարցնելուց յետոյ։

ՆԱԽԱԳԱՀ. Իւրաքանչիւր վկային հարցնելուց յետոյ դուք կարող էք բացատրութիւններ տալ, իսկ ձեզ առաջարկած հարցերին կարող էք պատասխան չը տալ՝ այդ ձեր իրաւունքն է։

Երբ վկաները երդվեցին սկսեցին պատմել իրանց գիտեցածը։

Ամենից առաջ վկայութիւն տուեց Կուրնէեվ, որ յունվարի 24-ին անցքի ատեանում, այն՝ որ անուանում են խոհեմ հոգատարութիւն երեխայոց՝ չէ կարելի. պատճառ որ այդ՝ երեխայք սակաւ անգամ ստանում են նաև նոյն իսկ մայրերից։ Ամենից առաջ աշխատութիւնը, բանելը, յետոյ կատարեալ ազատութիւնը, ծուլութիւնը ամենից քիչ. ստիպում են մայրերին ձեռք վեր առնել առողջապահական կանոններից։

Սակաւաթիւ չեն և այն դէպքերը՝ երբ մայրը տալիս է իր երեխային ուրիշի ձեռքը կրթութեան համար, ծածկաբար գնում է ուրիշի դրան առջև կամ վերջապէս սպանում է նրան, չը գիտենալով թէ ինչ անէ նրա հետ տանը։

Այսպէս կրթվում են գիւղերում և քաղաքներում աղքատ ընակիչների երեխայքը, այսպէս անցնում են նրանց առաջին, ամենաերկչոտ երեխայական տարիները առանց որ և իցէ կեանքի յարմարութեան և ամեն տեսակ դժբաղդութիւններով։

Ներկայ ռուս-տաճկայ պատերազմի ժամանակ՝ երբ արիւնը թափվում է լայն հոսանքներով, խեղճ մայրերի դրութիւնը աւելի տխրալի և ծանր է։ Հայրը սպանվեցաւ, թողնելով իր կնոջ՝ որպէս ժառանգութիւն միայն երեխայք։ Երբ նա կենդանի էր նա իր ճակատի քրտինքով աշխատում էր նրանց համար օրական ապրուստ, իսկ այժմ բոլոր խնամքը որբերի՝ մնում է խեղճ մօր վրայն։ Բայց նրա փոքրիկ երեխայքը բոլորովին չեն թողնում նրան տանից հեռանալու, թողնել նրանց նաև մի քանի ժամ, որպէս զի նրանց համար իսկ՝ զուրսը աշխատէ գտնեա այնքան՝ որքան հարկաւոր է նրանց սովից ազատելու համար։ Երեխաներով գնալ բանելու՝ անյարմար է և ով կընդունի վարձաւորին երեխաներով։ Երեխաների ճղաւելը և լացը ստէպ ստէպ կը հեռացնեն նրան իր գործից և կարող է արդեօք օրինաւոր կերպով գործ կատարել, որպէս զի հաւանելի լինի տիրոջ՝ երբ նա իր աչքի առջև ունի տանջվող որբերը, որոնց համար այնքան խնամատարութիւն է հարկաւոր, որքան հիւանդների և վիրաւորվածների համար։

Չէ՞ կարելի արդեօք իրաւ որ և իցէ կերպով օգնել մայրերի այսպիսի տխրալի և ցաւալի դրութեանը։ Փնտռենք Եւրոպայի արևմտեան տէրութիւններում, որտեղ խեղճերի դրութիւնը նոյնպէս վատ է, չը գտան արդեօք մի որ և իցէ բան, որ թեթևացնէ և լաւացնէ փոքրիկ երեխայոց դրութիւնը և կարելի չէ արդեօք մեզ ևս հետևել նոցա օրինակին։ Իրաւ, Ֆրանսիայում երեսուն տարի է ի վեր կան հիմնարկութիւններ, որոնց մասին Ռուսաստանում դեռ ևս նոր են մտաբերում և սկսում իրագործել։ Այս է ամենաօգտաւէտ և ամենահարկաւոր հիմնարկութիւններից մինը։ Այս հիմնարկութիւնները անուանվում են «Մասուր» (crèche)՝ ի յիշատակ մեր Փրկչի առաջին օրօրոցի։

Ի՞նչ հիմնարկութիւն է այդ։

Մասուրը մի այնպիսի հիմնարկութիւն է՝ որտեղ վարձկան բանուոր մայրերը, որոնք բանում են ամբողջ օրը տանից դուրս, բերում են ամեն օր երեխայքը ($^1/_2$ ամսականից սկսած մինչև $3^1/_2$ տարեկան հասակը) և ամենաէժան գրնով (3 կոպէկից մինչև 6 կոպ.), թողնում են այնտեղ ամբողջ օրը։ Ծիծ տուող մայրերը գալիս են մէկ կամ երկու անգամ օրը ծիծ տալու իրանց սաներին, իսկ մնացած երեխայքը ստանում են մասուրների մէջ իրանց հասակի համեմատ և յարմար կերակուր։ Հագուստը երեխաների փոխվում է նայելով ըստ հարկաւորութեան, իսկ նրանց վրա նշանակած փորձված դայակները վերահսկում են և խիստ պահպանում են մաքրութիւն։ Առհասարակ երեխայքը ստանում են մասուրներում խնամատարութիւն համեմատ վերջին հրատարակված առողջապահական կանոնների—այսինքն երեխայքը գտնվում են ամենայարմար իրանց համար հանդամանքների մէջ թէ տեղի վերաբերութեամբ և թէ օդի, կերակուրի և այլն։ Բացի ֆիզիկական կրթութենից ստանում են նրանք, համաձայն իրանց հասակի, մտաւոր և բարոյական կրթութիւն։ Մասուրները լաւ ներգործութիւն ունեն և նոյն իսկ մայրերի վրա, պատճառ որ նոքա խեղճ, տգէտ և նախապաշարված լինելով, ստանում են այստեղ բարի օրինակ և հարկաւոր ունեցած ժամանակ բարի խորհուրդ։

Մասուր անուանեալ հիմնարկութեան մէջ երեխայքը գտնում են իրանց համար ապաստանարան ամեն բանելու օրերը առաւօտեան լուսա-

տես էր։ Քաղաքապետը, ասաց նա ընդունում էր խնդրատուներին։ Ամենից առաջ մոտեցաւ Զասուլիչին վերցրեց նրա խնդիրքը և յետոյ դիմեց միւսին։ Յետոյ վկայ Կուրնեվ նշաններով ցոյց էր տալի Զասուլիչին, որ նա դուրս գնայ, այդ բոլորին Զասուլիչ բէվոլվէր արձակեց և քաղաքապետը ընկաւ յատակի վրա։ Վկան յարձակվեցաւ Զասուլիչի վրա բռնեց նրա վզից, թէ ինչ եղաւ դրանից յետոյ Կուրնեվ չէ յիշում։ Այն ժամանակ երբ բոզգի խփեցին Արվախով Բոգոլիւբովին, Կուրնեվ, սկզբնական կալանաւորութեան ատեն կառավարչի պաշտօն էր կատարում։ Վկան մոռացել էր այն ամենը, ինչ որ վերաբերում էր Բոգոլիւբովի բոզգի խփելուն։ Վկան այնքանը միայն յիշում է, որ Բոգոլիւբով յանդուգն խօսեց քաղաքապետի հետ, իսկ այս վերջինը հրամայեց նրան կարցէր նստեցնել և երբ այս հանգամանքից յետոյ կալանաւորվածները «աղմուկ և խառնութիւն» դցեցին, գեներալ Տրեպովից հրաման ստացվեցաւ Բոգոլիւբովին բոզգի խփել։ Երբ այդ հրամանը կատարվում էր, Կուրնեվ ներկայ չէր։

Միւս վկաները, որոնք ներկայ էին քաղաքապետի ընդունելութեան օրը, մի և նոյնը պատմեցին։ Զասուլիչը բէվոլվէր արձակելուց յետոյ, չէր փորձում ընդդիմանալ։ Իսկ քաղաքապետի ուղարկած յայտարարութենից երևում էր, որ մեղադրվածը փորձում էր կրկին բէվոլվէր արձակել ընդդիմանում էր և այլն,

Մեղադրվածը պատմեց, թէ իր լսած պատմութիւնները Բոգոլիւբովին ծեծելու մասին միակ շարժառիթներ էին յանցանք գործելու։ Ոչ թէ ինքը պատիժը, ոչ թէ նրա խստութիւնը, ոչ թէ անգթութիւնն էր վրդովում մեղադրվածին, այլ անպաշտպան և անօգնական մարդու արժանաւորութեան հետ կամայական կերպով վարվելը։ Իր սեփական փորձով նա շատ լաւ հասկանում էր ազատութենից զրկված անձինքների հոգեկան տրամադրութիւնը։ Մեղադրվածը, որովհետև պատահաբար ծանօթացել էր Նեչայեվի մոտ 1868 թ-ի մարդկերանց հետ երբ նա 18 տարեկան էր, երկու տարի շարունակ կալանաւորված է Լիտովսկի բերդում։ Երբ Նրան ազատեցին, ադմինիստրատիվ ձևով ուղարկեցին Կրեստցի քաղաքը։ Դրանից յետոյ նա մի քանի տարի պոլիցիայի հսկողութեան տակ թափառում էր Ռուսաստանի մէջ։ «Երբ ես առաջին անգամ լսեցի Բոգոլիւբովին պատժելու լուրը, ես սպասում էի, որ օրէնքը կամ հասարակական կարծիքը կը դատապարտեն կամայականութիւնը։ Բայց ժամանակը անցնում էր, իսկ ողորմելի տաժանակիր աշխատանքներին դատապարտված մարդուն ամենքը մոռացան։ Այն ժամանակ ես վճռեցի, իմ կեանքս անգամ զոհելով, հասատաել, որ չէ կարելի անպատիժ վերաւորել անպաշտպան մարդկանց։»

Վկաներից մէկը պատմեց որ ինքը յուլիսի 13-ին ժամի 10-ին Բոգոլիւբովի և մէկ ուրիշ քաղաքական յանցաւորի հետ ման էր գալի բերդի բակում։ Եկաւ Տրէպով և երբ պատահեց նրանց, բարկացած հարցրեց՝ ի՞նչի քաղաքական յանցաւորները միասին զբօսնում են։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Ապրիլի 7

Վերջին ժամանակում Գանձակ քաղաքի հայ հասարակութիւնը մեր հայ պարբերական թերթերի մէջ պ. պ. նամակագիրներից քննադատութեան ենթարկվեցաւ. նրանք բոլորը մի ուղղութեամբ իրանց արշինով չափելով՝ քննեցին, կշռեցին, ձևեցին, դատեցին և այն հետևանքի եկան, որ Գանձակի հասարակութիւնը ամբողջապէս անպիտան է, նրա մէջ չը կան պիտանացու անդամներ, ժողովրդական առաջի շնորհիւ բոլորեքեան ճանճերի հետ հաւասարեցան, բացի մի քանի երիտասարդներից, որոնք նոյն հասարակութենից ճնշված լինելով ոչինչ չեն կարողանում անել, (ի հարկէ այդ բացառութիւն կազմող երիտասարդների թւում կը լինեն և նամակագիրները)։ Պ. նամակագիրների այսպիսի վերացական մեղադրական մտքերով լի նամակները քննելու կամք չունեմ, հարկաւորութիւն էլ չեմ զգում, քանի որ նրանք հիմնված չեն մի որ և իցէ փաստի կամ իրողութեան վրա, այլ նմանվում են այն սովորական խօսքին, որ մի անգամ ասված է «հայը հարստահարող է, հրէան ցածանոգի է, մահմեդականը աւազակ է» այդ ազգերից՝ որ մինը և պատահի խոյսն կը պակվի նոյն պիտղոսով. չը նայելով որ նկատվողը մարդկութեամբ շատ բարձր է նկատողից. միայն մի համեստ խորհուրդ կը տայի պ. պ. նամակագիրներին, որ հասարակութիւնը կամ նոյն անհատը քննելու ժամանակ փոխանակ վերացական կերպով մեղադրելու, ուղղակի դրդի եղելութիւնը պատմէին, որից պարզ կեղրակացվէին թէ՝ մեղադրվողի լաւ կամ վատ կողմերը և թէ նամակագիրների փորձաութիւնը։

Թողնենք նամակագիրներին իրանց արշինով չափել ում և կամենում են, կամ հայելու մէջ նայելով կազմել իրանց նամակները, մտնենք քաղաքի մէջ և մի թեթև հայեացք ձգենք նրա վրա։ Գանձակ քաղաքը կարծես այս պատերազմի պատճառով մոռացված էր արտաքին բարեկարգութեան կողմից. փառք Աստուծոյ վերջացաւ պատերազմը, նրա հետ անցաւ ձմեռը, փողոցներում ձմեռվանից մնացած ցեխերը բոլորովին իտակվեցան, քաղաքի պլանիրովկայի անուանը, որ երկար ժամանակ չչնչելով քաղաքացիների ականջում նրանց սիրաը դողացնում էր՝ իրագործվում է արդէն. սկսել են առաջին փողոցի վրայի պլանի առաջ ընկնող տները քանդել։ Եթէ Գանձակը ևս պատերազմական քաղաքներից մինը լինէր՝ օտարականը կը կարծէր թէ՝ թիւրքաց զօրքը նոր է դուրս եկել նրա միջից. վնաս չունի՝ քանդածը կը շինվի, կը զարդարվի և աւելի կը գեղեցկանայ։ Լաւ ենք, որ առաջին փողոցը մտադիր են խճայատակելու, այդ ևս վատ չէ. գոնէ Գանձակի ծերերը դեռ չը մեռած կը տեսնեն խճայատակի ինչ լինելը։

Ասացի ձմեռը անցաւ և նրա հետ էլ իտակվեց մեր փողոցների ցեխը. եթէ նրա վրա, հոգայող չը լինէր բնութիւնը ինքն ևս կը հոգար, բայց ինչ պէտք է արած որ հասարակութեան ցեխոտները ևս վերանան. Լրագիրներին նայած մեր Գանձակը համեմատելով միւս քաղաքների հետ զողութեան կողմից խաղաղ դրութեան մէջ է, թէ և երբեմն երբեմն պատահում են և կարիճներ, ինչպէս անցեալ ամառ աւազակի մէկը երկար ժամանակ թափառելով Գանձակի մերձակայ այգիներում, պատահողներին միշտ սպառնում. կողոպտում էր. ասում էին թէ՝ քաղաքական ոստիկանութիւնը շատ էր հսկում բռնելու համար, չէր աջողում, բայց երբ նա մի երեկոյ դուրս եկաւ հասարակաց ճանապարհի վրա, երեք երիտասարդ գերմանացի կալոնիստներին կողոպտելու, նրանք բռնեցին և յանձնեցին ոստիկանութեանը. շնորհակալութիւն կալոնիստներին։

Օրերումս մի պարոն անբաւականութիւն ունենալով միւսի հետ, սպառնում է նրան տալ եթէ՝ միւս անգամ կը համարձակվի իր դէմ խօսել կամ գանդատվել, և երբ խօսակցութիւնը փոքր ինչ երկարում է, բաւական չը համարելով լեզուով սպառնալը, բէվոլվէրը հանելով կամենում է կրակել, բայց բարեբաղդաբար մօտի գտնված մարդիկ չենթողում։ Ասում են, որ սա իր մտադրութիւնը առաջ տանելու համար միւս օրը ևս գնում է այդին, բայց իր հակառակորդին այնտեղ չէ գտնում. սրա մասին յայտնված է քննչին։

Ծաղիկ հիւանդութիւնը ահա երկու ամսից աւելի է անխնայ կոտորում է թէ հասակաւորներին և թէ մանուկներին, գլխաւորապէս վերջիններին։ Օրական 5—7 երեխայ զոհվում են։ Բժիշկները շատ անտարբերութեամբ են նայում այս ցաւին, ժողովուրդը իր հին սովորութեամբ դիմից հոգեորականներին, նրանք էլ իրանց սովորութեամբ հսկում արեցին, թափոր դուրս եկան. այս մտադրութեամբ ազդմութիւն ժողված դրամը, որ մօտաւորապէս հասնում էր 500 բուբլու, աղքատներին բաժանեցին, բայց ոչինչ թեթևութիւն չը տեսան. անդոթ ծաղիկը դարձեալ իր զոհերը ատնում է դեռ աւելի սաստկութեամբ։

Այսպէս ուրիշի փող ուտելը մոդա է դարձել, կաշեգործի մինը բաւական փող պարաք անելով և մաքումը չը տալ հասատատ դնելով քաղաքական օրէնքներից ազատվելու նպատակով 5 տարի սրանից առաջ մի կերպով քահանայութիւն է ստանում, այժմ փող պահանջողին գաւազանով է սպառնում. Մինթէ յանցանք գործ-

---

դէմից մինչև գիշերը (սովորաբար առաւօտեան ժամի 6-ին մինչև երեկոյեան ժամի 8-ը)։ Բոլոր այս ժամանակ մայրը կատարեալ ազատ է գործ կատարելու, բանելու։ Կիրակի և միւս տօն օրերը, երբ մայրը չէ բանում և լինում է ազատ, երեխան գնում է տուն, մսուրները ևս փակ են և նրանց մէջ ծառայողները նոյնպէս ազատ են և հանգստանում են։

Մսուրներում ընդունվում են միայն առողջ երեխայք, որոնք արդէն հանել են ծաղիկ կամ պատուաստած են։ Իսկ հիւանդ երեխայք մանաւանդ փոփոխական ցաւերով ոչինչ պատճառով երբէք չեն ընդունվում։ Կաթնակեր մանուկներին, որոնց մայրերը անհոգութեամբ են կատարում կանոնը — գալ մէկ կամ երկու անգամ օրը կերակրելու, մսուրներում միւս անգամ չեն ընդունում։ Մի և նոյն ժամանակ մսուրները ընդունում են իրաւացի աղքատ և համեստ, աղնիւ բանուոր մայրերի երեխայքը, պատճառ մսուրների գլխաւոր նպատակն է ոչ թէ քաջալերել ծուլութիւնը և մոլութիւնը, այլ պահպանել և լաւացնել երեխայոց առողջութիւնը, բարոյականութիւնը և խեղճ մայրերի նիւթական դրութիւնը։

Ահա ինչպիսի է հիմնարկութիւնը, որ առաջին անգամ ծագեցաւ Ֆրանսիայում, նորա նոյն իսկ կենտրոնում, երեսուն տարի սրանից առաջ։ Թէ այս հիմնարկութիւնը հիանալի է և իրաւացի օգտաւէտ, այդ երևում է նրանից որ մսուրները հիմնվում են ամբողջ Եւրոպայի քաղաքներում և մանաւանդ Փարիզում, որտեղ նրանք դարձան այնքան ամենահարկաւոր աղքատ բնակիչների ընտանիքների համար, որ ժամանակաւոր փակումն (թողնում ենք բոլորովին ոչնչացնելը), կը յարուցանէր անպատմելի վիշտ, բողոքներ և մեծ անկարգութիւն ֆրանսիացի արուեստաւորաց ընտանիքներում։ Մեր Թիֆլիսին նմանապէս հարկաւոր է ունենալ մսուրներ։ Ցոյս ունենք որ նրանց սպասում է այդտեղ նոյնպէս մի փառաւոր ապագայ։ Փարիզում մսուրների հիմնողն է մի ֆրանսիացի Ֆ. Մարբօ (Marbeau)։ Սա առաջինը, մտածեց և ինքն իրագործեց այդ միտքը։ Ահա երեսուն և մի տարի է առաջին մսուրը հիմնելու օրից. Մարբօն, առանց հեռանալու մսուր հիմնելու մտքից, աշխատեց, հիմնեց և բացեց։ Նա իր կեանքի մէջ գոհ էր և ուրախ որ իր սեփական աչքերով տեսնում էր իր սիրելի մտքի իրագործվելը, թէ ինչպէս աջող առաջ գնաց գործը և ինչ բարի պտուղներ բերեց։ Ամենամեծ և ամենաբարձր պարգև իր աշխատանաց համարում էր լսելը՝ թէ ինչպէս հարիւրաւոր գործաւորներ օրհնում էին նրա անունը՝ անուանելով նրան երկրորդ փրկիչ։

Ի՞նչ է հարկաւոր անել որ մսուրներ հիմնվեն։

Մեր կարծիքով նախ և առաջ հարկաւոր է կազմել մսուրների ընկերութիւններ, որոնց անդամները թէ խօսքով և թէ գործով օգնեն այսպիսի հիմնարկութիւն ստեղծելուն մեր քաղաքի մէջ։ Նիւթական միջոցներ այդպիսի բարի գործի համար շատ չեն հարկաւորվի։ Հարկաւոր է միայն տեղ, յարմար կահ և կարասիք. փոքր ինչ երեխաների պատրաստի լուացք. մի քանի կին երեխայոց խնամատարութեան համար և մի բժիշկ։ Կառավարութիւնը որ վերահսկէր մսուրների գործին, ունենար գրքեր օրինաւոր կարգի և հաշուէր մաքրութիւն և կարգ պահպանելու մսուրների մէջ։

Մեր կարծիքով մսուրները հարկաւոր են ոչ թէ միայն քաղաքի մէջ, այլ նաև գիւղերում, մէկ խօսքով այնտեղ որտեղ կինը ինքն իրան համար տանից դուրս ճարում է իր օրական ապրուստը, որտեղ նա իր սեփական աշխատանքով պահում է իր ընտանիքը։ Գիւղի մէջ, որտեղ մայրը զբաղված է դաշտային պարապմունքներով, որտեղ չարչարանքի ժամանակ, նոյն իսկ հնձի ժամանակ, ծիծ տուող մայրը, յոգնած ծանր աշխատանքից և թուլացած արեգակի սաստիկ տաքութենից, պէտք է ստէպ-ստէպ գայ իր անչքեղ օրօրոցի մօտ, որտեղ պառկած է իր երեխան։ Երեխան սաստիկ տաքութենից այրվում է, օրօրոցի վրա շինած հովանոցը հազիւ է պաշտպանում նրա թոյլ աչքերը յուլիսի արեգակի այրող ճառագայթներից. ծարաւը նրան տանջում է, նրա փոքրիկ բերանը չորանում է, նա դողացնում է, բղավում է, ճղավում է։ Մայրը տալիս է ծիծ կամ գնում է նրա բերանը ծծանման պտուկը։ Գործը գնում է աւելի վատ. կաթի մնացորդը բերանում քացխում է, մարմնում փափուկ կաշին քրանքից սկսում է բորբոքվել, և պատճառել զանազան հիւանդութիւններ, որով տանջանքի մէջ է ընկնում երեխան։ Կերակրելուց յետոյ սրբել երեխայի բերանը մաքուր թաց ջրով և թողնել նրան երկու երեք ժամ առանց ուտելու, այն պատճառով որ նրա ստամոքսը կարողանայ հանգստանալ՝ — մայրը չէ մտածում այս բաների վրա, որովհետև չը գիտէ թէ որքան վնաս է երեխայի համար թողնել նրան թաց և կեղտոտ խանձարուրքի մէջ. թէ ինչպէս տանջվում է նա երբ մարմնի փափուկ կաշին ուտվում է կեղտոտութենից, քրտինքից եռ է գալիս և ծածկվում է սաստիկ վնասակար ուռայոքներով։ Չը գիտէ խեղճ մայրը թէ ինչպէս դիւրին է հեռացնել այս, փաթաթելով երեխան չոր շորի մէջ և շաղ տալ (թափել) բորբոքված տեղերը գոնեա ալիւրով, պատճառ որ արդէն յայտնի է որ ջաղացպանների երեխայքը երբէք չեն զգում այս տեսակ հիւանդութիւններ, նոյն իսկ ջաղացի ալիւրի բարակ թոզի պատճառով որ նստում է երեխաների մարմնի վրա և աղատում է մարմնի կաշին բորբոքումից։

Այս բոլորի վրա գեղջուկ մայրը ինքը մտածել չէ կարող, բայց ով ցոյց կը տայ նրան։ Ո՞վ կասէ նրան թէ ինչպէս լաւ է վարվել երեխայի հետ, ով, բացի անհատամ պառաւներից որոնց ուղեղները և ոսկորները լի են նախապաշարմունքներով և մէկը միւսից աւելի այլանդակ։ Ահա այստեղ իսկ կարող է երևալ կալուածատէրերի մարդկութիւնը և աշխատութիւնը, նրանց ուղիղ պարտականութիւնն է մսուրների հիմնելը, որ կարողանան օգնութիւն հասցնել այս միջոցին խեղճ և ազէտ մայրերին։

Քաղաքի համար մսուրները նոյնքան հարկաւոր են, որքան և գիւղերի համար, պատճառ որ քաղաքներում շատ աւելի են ժողովվում վարձական կանայք, միշտ տանից դուրս բանողներ։

«Հարցրէք, ասում է Մարբօն, շրջավաճառին լուացք անողին, վարձկան կանանց և որ և իցէ մօրը, որ առաւօտից գնում է բանելու և ապրում է օրական աշխատանքով, ինչու նա ինքը չէ հոգս քաշում իրան երեխայի համար, և նա ձեզ կը պատասխանէ թէ՝ ես ինքս որ հոգս քաշեմ երեխայի համար, ով կերթայ իմ փոխանակ բանելու, եթէ իմ աշխատութիւնը, գործը, չը լինի պատրաստ ով կը տայ ինձ և իմ երեխային միջոցներ ապրելու։ — Մարդ։ — Նա չը կայ արդէն... կամ նա հիւանդ է, առանց տեղի և գործի է, ծոյլ է, սաստիկ արբեցող է, թողել է ինձ... և այլն։ Բաւական է այս հանգամանքներից մինը որ ստիպել խեղճ կնոջ ապրուստ ճարել ընտանեաց համար իր սեփական աշխատանքով։ Աղքատները չունեն եկամուտ, նրանք ապրում են ռոճիկով կամ ողորմութեամբ։ Ո՞րն է աւելի լաւ։ Ի հարկէ աւելի լաւ է աշխատել, բանել, քան թէ աղքատութիւն անել, ողորմութիւն խնդրել։ Այս լաւ է թէ մօր համար, թէ երեխայի, թէ ընտանիքի և թէ նոյն իսկ երկրի համար։ Ցաւանի և պարզ է որ այս միջոցներում մսուրները կարող են շատ օգտաւէտ լինել։ Մսուրը պահում է երեխային, աշխատութիւնը կերակրում է և պահպանում է մօրը։»

«Համեմատեցէք, ասում է յետոյ Մարբօն, երկու մայրեր։ Մինը՝ որպէս զի չը բաժանուի իր նորածին երեխայից՝ մեկնում է անցնողներին ձեռքը. աղքատութիւն է անում ողորմութիւն խնդրելով, չը նայելով ոչ ձիւնին և ոչ անձրևին, միւսը վեր է կենում առաւօտեան ժամի 5-ին, տանում է իր երեխային մսուրը և վազում է բանելու. նա երկու անգամ գալիս է օրը ծիծ տալու երեխային և վերադառնում է իր գործին։ Երեկոյեան նա վեր է առնում մսուրից երեխային և տանում է տուն։ Ո՞րն է սրանցից աւելի օգուտ բերում իր երեխային, երկրին....»

Վերջացնելով մեր նկատողութիւնը, մենք համոզված ենք որ մեր ժողովուրդը ևս կը համակրի մսուրների հիմնարկութեանը մեր քաղաքում՝ պատճառ որ բանուորների դրութիւն լաւացնելը, առանց տէրերին վնաս հասցնելու, պէտք է համարվի որ և իցէ լուսաւորված ընկերութեան ամենաանհրաժեշտ խնդիր։

Խարկով. Ա. Մելքումեանց

ծած չեն լինի եթէ նրա բարի օրինակին հետեւող կը լինեն։ Մէկ քահանայի որդի նոյնպէս զանազան մարդկանցից պարտք վեր առնելով նոյն նպատակով ստանում է սարկաւագութեան աստիճան. պարտատէրերը փողը պահանջում են, փոխանակ փողի «չունեմ» բառն են ստանում, դիմում են դատարանին, կատարող թերթեր են ստանում, իսկ սարկաւագը նրանց վրա իր մըքում կուշտ ծիծաղում է, ըստ որում մտածում է՝ ինչ պէտք է անեն, չարժական և անչարժ կայքերս պատկանում են կնոջս և զոքանչիս, իսկ իմ անձս ապահովացրած է հոգևորականի երկար փարաջայով։

Այս այն սարկաւագն է, որ փողոցում պատահելով յաջորդ վարդապետին սկսել է բանակռել ասելով, «չէ որ դուք խոստացաք պ. Ե.... ինձ օգնելով՝ գործիս լաւ ընթացք տալ առաջնորդի մօտ, բայց այժմ տեսնում եմ, որ ընդհակառակն իմ թշնամիս դուք էք եղել. ինձ միայն չը կարծէք, ես ևս ունեմ կողմնակիցներ, ինձ ևս կարող մի խնդիր զրկել ում հարկն է։» Եւ նրան ասում է այն. ինչ որ մի ամենահասարակ մարդ իրան թոյլ չէր տայ։ Իրաւ որ նա կազմելով իր համար մի գովասանական թերթ աղաչելով, պատատելով ստորագրել է տալի ժողովրդին. գանվում էին պարոններ, որոնք միշտ տրանջում են նրա վարքի դէմ, իսկ այսօր ստորագրում են թերթին, չը գիտեմ գիտակցաբար թէ անգիտակցաբար։ Ի զուր չէր մի անգամ մի բարձր պաշտօն ունեցող ասիճանաւորի նկատողութիւնը մեր հասարակութեան առաջնորդներին, երբ վերջիններս գնացած էին նրան այցելութեան, թէ՝ իշխանութիւնը որքան և աշխատէ պակասեցնել հասարակութեան անկարգութիւնները նրան չի աջողվի, մինչև նոյնը չանէ ինքը հասարակութիւնը, բայց եթէ բարոյականութեամբ հիւանդացածները միշտ պաշտպանութիւն կը գտնեն հասարակութենից, էլ ի՞նչ կարելի է ուզել։ հասարակութիւնը այն ժամանակ համարձակ կարող է ասել՝ ես հասարակութիւն եմ, երբ նա ինքն իր միջի բարոյականութեամբ հիւանդներին կամ խպառ կը հեռացնէ և կամ կառողջացնէ։

Գանձակի վիճակը հետզհետէ հարստանում է ուսումնարաններով, բայց որովհետև նամակս առանց նրանց էլ երկարեց, վասնզոյ յոյս ունեմ չուտով ընթերցողներիս հետ տեսնվել այդ առիթով։

Շ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի նահանգական դատարանի պրոկուրորը ուղարկել է Թիֆլիսի կոնսիստորիային Զարեհայ վանքի վանահայր Աստուածատուր վարդապետի մեղադրական գործը։ Հայր սուրբը մեղադրվում է մէկ վիրաւորած, կիսաշունչ մահմեդականին գետի մէջ ձգելու և խեղդամահ անելու մէջ։

Կովկասի մի քանի տեղից մեզ հաղորդում են, որ օրերումս եկած անձրևներից յետոյ յոյս կայ որ այս տարի առատ հունձ կը լինի։

Լսում ենք, որ մի քանի պարոններ մտադիր են ԹԻՖԼԻՍԻ ամառային թատրոնում մի ներկայացումն տալ յօգուտ պ. Ամերիկեանի, որ մի քանի ժամանակ է հիւանդ է։

Ստացանք «Արարատ» ամսագրի փետրվարի տետրակը։

Մեզ հաղորդում են, որ ՆՈՐ-ԱՂՍՏԱՖԱ կայարանի վերակացուն չատ անճիշդ է հաշվում այնտեղ ստացվող լրագիրները բաժանորդներին։ Լրագիրները անկարգ ածված են սեղանի վրա և ամեն մէկ ճանապարհորդ նրանցից վերցնում է և տանում։

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մի քանի ժամանակից այստեղ միտք էր ծագել գաղթած հայերին օգնելու համար Թիֆլիսի և Երևանի ձեռվ մի մասնաժողով կազմել։ Թոյլատրութեան համար խնդիր էր տուած նոյեմբերի 25-ին։ Այժմ թոյլատրութիւնը արդէն ստացվել է Նորին Բարձրութիւն Կովկասի փոխարքայից։ Ապրիլի 2-ին հասարակութիւնը հրաւիրված է մասնաժողովի անդամներ ընտրելու».

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ մեծիք Յովհաննէս Կոստանեանց հասարակութեան ցանկութեամբ ծախսից հին գերեզմանատան քարերը 250 ր.։ Գերեզմանատունը մեծիքի առաջարկութեամբ դարձնում են հասարակաց այգի։ Այդ պարտէզը ջրելու համար արդէն հոգս է տարած։

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ Խորէն վարդապետ Ստեփանէին վերաբերեալ բրոշիւրի մասին այնտեղ տեղեկութիւն չունեն։ Մենք զարմանում ենք, ինչպէս Բագուցիք տեղեկութիւն չունեն այն գրուածքի մասին, որ տպվել է իրանց քաղաքում, «Մարդ. Ընկ.» տպարանում։ Այդ բրոշիւրը ամեն տեղ մեծ քանակութեամբ տարածված է։

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, որ մի քանի օր չարունակ այնտեղ անձրև է գալի։ Փողոցները անանցնելի ցեխով են ծածկված։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐԻԱ

Վիեննայի լրագիրները տարբեր տեղեկութիւններ են տալիս գեներալ Իգնատիէվի կոմս Անդրաշիի հետ ունեցած տեսակցութեան մասին։ Նրանցից մի քանիսը ասում են թէ գեներալ Իգնատիէվ կարողացել է վստահացնել Աւստրիային և այդ պատճառով կոմս Անդրաշին աշխատում է խաղաղութեամբ համաձայնեցնել ռուսաց և անգլիական կաբինէտները։ Մի քանի լրագիրների աշխատակիցներ որոնք տեսակցել են գեներալ Իգնատիէվի հետ, այդ համոզումը ունեցել են։ Սրանք ասում են որ եթէ գեներալ Իգնատիէվ ճիշդ իր փափագած հետևանքին չէ հասել, գոնէ վստահացած է որ Աւստրօ-Ունգարիան ցանկանում է Ռուսաստանի հետ ունեցած լաւ յարաբերութիւնները շարունակել, միայն թէ Ս. Պետերբուրգի կաբինէտը իրան խաղաղասէր և հաշտասէր ցոյց տայ։ Իսկ ուրիշները ասում են թէ գեներալ Իգնատիէվ իր պաշտօնի մէջ չաջողվելով Վիեննայում, խորհուրդ է տալիս Ս. Պետերբուրգի կաբինէտին որ շնորհումներ անէ և կոնդրէսի հաւաքվելը դիւրացնէ։

Գուցէ լրագիրները, իրանց սովորականին համեմատ, աւելի առաջ են գնում քան թէ դիպլոմատիան։ Մինչև անգամ հրատարակեցին թէ Ռուսաստանը և Աւստրիան պարզապէս որոշել են որ իրանց սահմանագիծը լինի Բալկանեան թերակղզին, կամ ուրիշ բառերով ասենք, համաձայնվել են Թիւրքիայի բաժանման մասին։ Մի քանիսն էլ գրեցին թէ գեներալ Իգնատիէվ չը կարողանալով աջողվել իր պաշտօնի մէջ Վիեննայում, Ռուսաստանը զգուշանում է պատերազմից և հաւանում է որ կոնդրէսը գումարվի այն պայմաններով որ առաջարկում է Անգլիան։ Այս երկու ծայրայեղ կարծիքների մէջ առ այժմ հաւանականն այն է որ Աւստրօ-Ունգարիան չէ ուզած հիւսիսային արքունիքի հետ ունեցած իր բարեկամութիւնը խզել, բայց Սան-Ստէֆանոյի դաշնագիրն էլ իր շահերին ամբողջապէս համաձայն չը գտնելով, առաջարկութիւններ է արած գեներալ Իգնատիէվին որ Ս. Պետերբուրգ վերադառնալով հաղորդած է ռուսաց կաբինէտին։ Դեռ այդ առաջարկութիւնները չը հրատարակված և նրանց ընդունվելը կամ մերժվելը չը գիտցված, չէ կարելի հաւատալ որ Աւստրիան Անգլիայի կողքին կանգնած, նրա հետ միասին պատերազմէ իր հին բարեկամ Ռուսաստանի դէմ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրանում շուկաների պատերի վրա զըրգռիչ յայտարարութիւններ են կպցրել և մզկիթների մէջ ցրվել են։ Այդ յայտարարութիւնների մէջ գրված է թէ Շահը իր զուարճութիւնների վրա միայն հոգս է անում, թէ նորից պատրաստվում է գնալ զբօսնել Եւրոպայում առանց իր ժողովրդի պէտքերը մտածելու. թէ Սիպահ-Սալար-Ազամը (պատերազմական մինիստր) անհաւատ է որ եւրոպացիների հետ ամեն օր յարաբերութիւններ անելով, ոտնակոխ է անում Իսլամի օրէնքները. թէ Մուստաֆի էլ Մումնլէկը մի տըկար ծերունի է և որ ոչինչ չէ անում։ Թէ ազգը պէտք է որ ազատվի այդ երեք մարդերից, որ և իցէ կերպով, մինչև անգամ, եթէ հարկաւոր լինի, սպանելով։

Ժողովուրդը այդ յայտարարութիւններից զրգռվել է, ոչ թէ անուանարկված անձերի դէմ, այլ նրանց գրողների դէմ և պօլիցիային աջողվել է մի և նոյն օր կալանաւորել երկու անձեր որոնցից մինը խոստովանել է թէ ինքն է գրել այդ ժողովրդական հրաւէրը և միւսն էլ ասել է թէ նրա կպցնելը տեսած է։ Այժմ երկուսն էլ շղթայակապ բանտարկված և քննութեան են ենթարկված։

Նասրէդդին Շահի եղբայրը Աբաս-Միրզա թէհրան է գնացել։ Երբ Նասրէդդին շահը դահակալեց, իր մեծ եղբայր Աբաս-Միրզան նախանձոտ համարվելով, սոիպվեցաւ 1848 թ-ին քաշվել Բաղդադ։ Օսմանեան կառավարութիւնը նրան մի թոշակ յատկացրեց։ Մի քանի տարի կայ որ սկսել են բարեկամանալ երկու եղբայրները և Աբաս-Միրզան այժմ թէհրան այցելելով, հաստատում է իր հաշտութիւնը։

Մասնաւոր նամակներ գրում են թէ ժանտախտի մի քանի դէպքեր են պատահել, ոչ միայն Բաշտում, այլ և Մէշհէդզերում որ Կասպից ծովի վրա մի նաւահանգիստ է։ Այդ տխուր լուրը եթէ հաստատվի, կարանտինը կը շարունակվի ռուս-պարսկական սահմանագլխներում։ Ռուսաց կառավարութիւնը պաշտօնապէս հրաւիրել է Շահին որ Եւրոպա ճանապարհորդած ժամանակ Ս. Պետերբուրգ գնայ։ Ցայտնել է նաև թէ Ռուսաստանում անյայտ կերպարանքով լինելը անկարելի կը լինի և թէ ինքն կամենում է յարգել շահին-շահին ամենամեծ պատիւներով, ինչպէս արաւ իր առաջին ճանապարհորդութեան ժամանակ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզի «Constitutionnel» լրագրին Կ. Պոլսից գրում են մարտի 21-ից հետևեալը, «Սերբիի դէմ անբաւականութիւնը մեծանում է։ Մի քանի օր է որ սուլթանը, ինչպէս երևում է, անհանգստութեան մէջն է և Եալդիզի կեսչ պաշտպանող զորքերը աւելացրած են։ Աբդուլ Համիդը հարկաւոր համարեց նախազգուշութեան միջոցների դիմել իր եղբայր Բաշիդ-էֆէնդիի դէմ. նա հրամայեց նրան ոչ ոք չընդունել և զինուորներ կանգնեցրեց նրա բնակարանի դռների մօտ։ Բայց Բաշիդը հրաժարվեց հնազանդել այս հրամանին և երկու եղբայրների մէջ մեծ կռիւ ծագեց։ Բաշիդը սուլթանին մեղադրում էր այն բանի մէջ, որ Թիւրքիայի բոլոր քամբաղդութեան պատճառը նա է, նրա համար որ վատ խորհուրդներին հետևեց և դրանով փչացրեց բանը։ Բաշիդը աւելացրեց որ եթէ ժողովուրդը կամենար իրան խալիֆութեան աստիճանը բարձրացնել, այն ժամանակ նրա դէմ ընդունած բոլոր միջոցները անօգուտ կը լինէին։ Այս բաղդից երկու եղբարց մէջ բոլոր յարաբերութիւնները կտրվեցան և սուլթանը կրկնապատկեց նախազգուշութիւնը Բաշիդի դէմ։ Իսկ ինչ վերաբերում է Մուրադին, նորերումս տարածված լուրը իբր թէ նրան Սիվաս կամենում են տեղափոխել, ուղիղ չէ։

—«Daily News» լրագրին Վիեննայից հեռագրում են մարտի 3-ից հետևեալը. «Կոմս Անդրաշի յայտնեց կոմս Իգնատիէվին, որ քաղաքական, վաճառականական և զինուորական հաւասարակշռութիւնը պահպանելու համար, Աւստրիան յայտնում է իր համաձայնութիւնը Սան-Ստէֆանոյում կազմած խաղաղութեան վերաբերութեամբ հետևեալ հինգ պայմաններով. 1). Աւստրիան վաճառականական և զինուորական դաշնագրութիւն է կապում Սերբիայի, Բոսնիայի, Հերցեգովինայի և Ալբանիայի հետ, 2) Մինչև Սալոնիկ չինվող երկաթուղու ապագայ կառավարութիւնը պէտք է Աւստրիայի կոնտրոլին ենթարկվի։ 3) Բոլգարիան նաւահանգիստ պէտք է չունենայ Եգեյեան ծովի վրա, 4) Սուլթանի ինքնակալութիւնը, նրան թողած երկիրների վրա պէտք է ապահոված լինի։ 5) Աւստրիայի և Թիւրքիայի մէջ պէտք է անմիջական յարաբերութիւն կապվի վերոյիշեալ պայմանների համաձայն դաշնագրութեամբ։»

—Բերլինի «Bank-und Handelszeitung» լրագիրը ապրիլի 3-ից ասում է հետևեալը. «Ամենքը համոզված են որ Անգլիայի բռնած այժմեան դիրքը մեծ մասամբ պէտք է թագուհու ազդեցութեանը վերաբերել, որը չէ ծածկում իր դէպի Ռուսաստանը ունեցած ատելութիւնը։ Երբ կոնդրէսի վերաբերութեամբ անգլիական պահանջներին Ռուսաստանը պատասխանեց, դրանից յետոյ հարց բարձրացաւ թէ արդեօք լորդ Դէրբին էլի ուրիշ զիջումներ կանի թէ չէ, ինչպէս լսվում է թագուհին ասաց. «Եթէ նա այս բանը կանի, ես չեմ համարձակվի մայրաքաղաք գնալ, որովհետև ամաչում եմ երևալ իմ ժողովրդին և օտար պետութիւնների ներկայացուցիչներին...»։ Թագուհու այսպիսի և դրա նման խօսքերը այնպէս վաղուց տարածված է ժողովրդի մէջ, որ ոչ ոքի համար զարմանալի բան չէ երևում.»

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հռոմի պօլիցիական կառավարութիւնը յայտնել է Եւրոպայի բոլոր կլխաւոր քաղաքների պօլիցիաներին, որ նորերումս գտել է Հռոմում միջազգային գողերի ընկերութիւն, որը ունեցել է արդէն 5 տարի չարունակ իր բաժանումները բոլոր Եւրոպայի քաղաքներում և գաղտնի հաղորդակցութեամբ քաղաքներից ժողոված թանկագին իրեղէնները թագցրած ունէ Հռոմի պահեստում որպէս գլխաւոր կենտրոնի մէջ։ Այդ միջազգային գողերի ընկերութեան գլխաւորի (որը կին է) սենեակը փնտռելու ժամանակ գտնվել են շատ թանկագին իրեղէններ, ոսկի, մատանի բրիլեանտներ, նրա արկղների վրա գրոշմված է Պետերբուրգի, Բրիւսելի, Վիեննայի, Թիֆլիսի, Բերլինի և ուրիշ շատ քաղաքների, առաջնակարգ հռչակաւոր ոսկերիչների ֆիրմաները։ Ինչպէս երևում է մի քաղաքում գողացածները ծախվում են եղել միւս քաղաքում և հակառակ։ Հռոմի պօլիցիական վարչութիւնը հրատարակելով իմաց է տալիս բոլոր տէրութիւնների պօլիցիաներին, որ օգնեն կալանաւորելու այդ միջազգային գողերի ընկերութեան ամեն մի պատահած անդամին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 7/19 ապրիլի։ Վէֆիկ-փաշան արձակված է, նրա տեղ նշանակված է Սադիկ փաշան, բայց այս փոփոխութիւնը չէ կարելի մեկնել յօգուտ ռուս-թիւրքաց դաշնակցութեան։ Բ. Դուռը խոստացաւ շտապեցնել Շումլայի և Բաթումի մաքրելը։ Էմլի-փաշան նշանակված է պետական խորհրդի նախագահ, Մունիֆ-էֆէնդին լուսաւորութեան մինիստր, Մահմուդ-փաշան արդարութեան մինիստր, Յովհաննէս-Համիդ առևտրական մինիստր, Զուգդի-էֆէնդին կողմնակի հարկերի դերեկտոր։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8-ին ապրիլի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96⅝ ր., երկրորդ 95 ր., երրորդ 95 ր., չորրորդ 94 ր. 75 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմակը արժէ 231 ր. 75 կոպ., երկրորդ 228 ր., արևելեան 93 ր. 50 կ., ոսկի 8 ր. 29 կոպ.։ Ռուսաց ռուբլ Լոնդոնի վրա արժէ 23¾ պէնս, ռուսաց 100 ր., Բերլինի վրա արժէ 202 մարկ, Փարիզի վրա 248 ֆրանկ 50 սանտիմ։ Տրամագրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8-ին ապրիլի։ Ապրիլի 3-ին Մոսկվայի փողոցներում պատահած անկարգութիւնների ժամանակ ոչ ոք չէ սպանվել։ Այդ անկարգութիւնների գործը յանձնվում է հաշտարար դատաւորներին։ Լուր կայ, որ գործող զօրքերի գլխաւոր շտաբի կառավարիչ գեներալ Նէպոկոյչիցկու տեղ, նշանակվում է իշխան Իմերետինսկի։

ԲԵՐԼԻՆ, 8/20 ապրիլի։ Բիսմարկ իր անգլիական կաբինէտին արած առաջարկութեան վրա նայում է իբրև մի միջոցի վրա, որով կարելի է իմանալ լորդ Բիկոնսֆիլդի իսկական նպատակները։ Բիսմարկ առաջարկել է անգլիական կառավարութեանը դուրս տանել պատերազմական նաւատորմը Մարմարեան ծովից այն պայմանով, որ ռուսաց զօրքերն էլ հեռանան ափերից։ Կոնդրէսը յետաձգված է մինչև ամառ։

ՎԻԵՆՆԱ, 8/20 ապրիլի։ Գերմանիայի միջամտութիւնը նոր դժուարութիւնների պատահեց։ Անգլիան հաւատարիմ է իր առաջվայ պահանջներին և մերժում է նաւատորմի Մարմարեան ծովից դուրս բերելու առաջարկութիւնը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուտով մամուլի տակ կը մտնեն իմ ժողոված «Անեկդոտները», որոնք պարունակում են իրանց մէջ շատ երևոյթներ ազգային ներկայ և անցեալ կեանքից։

Տպվում է բաժանորդագրութեամբ. ամեն մի օրինակի գինը 50 կոպ. է։ Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել պ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում։

1—3 Գ. Շերմազանեանց.

ԱՌՈՂՋԱԿԱՆ—ԱՍԵՆԻԶՅԻՕՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՒՈՐԸ ծաղիկ սարավոխիկ հիւանդութեան առաջն առնելու համար, հրաւիրում է իր բաժնի մէջ (Թիֆլիսի առաջին, երկրորդ, երրորդ և առանձին մասների) բնակիչներին որքան կարելի է շուտով կարել երեխաների ծաղիկը։ Ծաղիկը պատուաստում են երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը առաւօտեան ժամի 10-ից ծաղիկ պատուաստող հիմնարկութեան մէջ, որ գտնվում է Զավշաւեանական փողոցում, զինուորական գիմնազիայի դիմացը։ Բացի այդ առողջական առաջին բաժինը ունի ծաղիկ պատուաստող, որ ամեն օր ծնողների պահանջներին համեմատ ծաղիկ է պատուաստում տներում։

1—3

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ТІФЛІСЕАН КАՇՈՒ ԴՈՐԾԱՐԱՆ

Тамбжіннаya փողոցի վրա Ցունաց եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ կաշիներ կօշիկների, թամբերի, կառքերի սրուեստների համար և նոյնպէս հում կաշիներ։

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտորայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ։ Մաս մաս ծախվում է Սիոնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում։

8—25 (2)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ ուսում է առել Փարիզում, ցանկանում է տալ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ։ Կարող է նոյնպէս ՐԵՊԵՏԻՏՈՐԻ ՊԱՇՏՕՆ վարել։ Հասցէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատանը։

7—10

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է

„ՍՈՒՍԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆԻ

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Այս հատորին բաժանորդ լինել ցանկացողներին հրաւիրում եմ դառնալ ԲԱԳՈՒ՝ «ՍՈՒՍԱԿԻ» հրատարակչին, կանխիկ ուղարկելով իւրաքանչիւր օրինակի համար 1 ռուբլի այս հասցէով՝ Аваку Лазаревичу Григорьеву, въ Баку.

Տպագրութենից յետոյ իւրաքանչիւր բաժանորդ կը ստանայ իրա պատկանեալ գիրքը, համեմատ իրա հասցէի, ամենայն ճշգրտութեամբ։ Ա. Գրիգորեանց.

ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

Ստացաւ պ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ աշխատասիրութիւնք՝

1) Հիւսուածք բանից նախնի պատմագրաց Հայոց. պատմութիւն ժամանակաց մարզպանութեան 'ի Հայս. մասն առաջին. Վեհմիհրշապուհ-Վահան Մամիկոնեան։ Գինն է 75 կ.

2) Հիւսուածք Հայոց հին պատմագիրների ժամանակվայ պատմութիւնը. առաջին մասն. Վեհմիհրշապուհ-Վահան Մամիկոնեան, գրաբարից թարգմանեց։ Գինն է 75 կ.

3) Հիւսուածք Հայոց մարզպանների պատմութեան առաջին մասի համար. յառաջաբան, ծանօթութիւնք, ժամանակագրութիւն և պատմական հաստուածներ. գիրք երրորդ գինն է 1 ռ.—50 կոպ.

3—3

Թիֆլիսի կենդանիների հովանաւորութեան վարչութիւնը յայտնում է ամենքի գիտութեանը որ համաձայն ընդհանուր ժողովների վճիռների, այս վարչութեան կազմակերպութիւնը ներկայ ժամանակում հետևեալն է. նախագահ Ս. Ա. Տալիզին, փոխ-նախագահ Դ. Ի. Կիպիանի, վարչութեան անդամները. իշխան Դ. Ի. Զօրջաձէ, Մ. Ն Գերասիմով, և անդրկովկասեան մուֆտի Նազի-Համիդ-էֆէնդի-Մուստաֆայ-էֆէնդի-Զադէ, վարչութեան անդամութեան կանդիդատները Մ. Կ. Լօմիդէ, Ա. Ի. Տիմիրեազեվ, Ա. Ի. Շամխաբով, գանձապահ Ա. Գ. Սերգէեվ, գանձապահի կանդիդատ, Գ. Ն. Իսանլիանի, քարտուղար Ն. Ի. Մեշչերակի և քարտուղարի կանդիդատ Ս. Ս. Շչուկին։ 2—3

Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի վարչութիւնը յայտնում է, որ իրանց երեխաներին ծաղիկ կարել ցանկացողները, կարող են հիւանդանոցին դիմել, որտեղ ծաղիկ պատուաստելը բժիշկների ներկայութեամբ կը կատարվի երկուշաբթի և ուրբաթ օրերը 10-մինչև 12 ժամը։ Ծաղիկ պատուաստելու վճարը 30 կոպ. է, իսկ աղքատների համար ծաղիկ կարելը ձրի է։

Գերեկասրի տեղ Վ. Էրմիշեվ։

2—3

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐՑՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԻԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

ԱՊՐԻԼԻ 11. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Ապրիլի 10-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուսմպերիալը)	8	40
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1450	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1270	—
Վիգրէյնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրէյնի »	235	—
Մարսելի կուրսը 265—	258	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	60
Վենայի կուրսը ածէ 112 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	70
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .		
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	50
» միւս տեսակը.	8	40
» չաքարաւազը.	6	—
» տրանդիտը. .	6	40
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	20
Միւս տեսակը հին սերմից.	7	20
Բուրդը թուչի . . .	8	—
» թարաքամի .	4	50
Ալիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	50
Մոմը բնաճարպի (стеар.)	13	30
Մետաքս Նուխվայ. .	160	—
Կախեթունը. . . .	90	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	35	—
Ֆրիզոնը (լասը) Ադուլեաց	40	—
Կոֆէն մօկօի. . . .	25	—
» Լիվանի . . .	18	—
» մարտինկօյինը	17	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլի։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլի, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլի ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո. .	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի, հինգշաբթի և կիրակի։ Բելիկլիուչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկօլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Էյլս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակաս սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակաս կրծքային և ջղային Սօկօլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակաս վենեական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշեվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշեվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Էյլս աչքերի հ. Բակաս կրծքային և ջղային հ. Սօկօլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—Վ. ԱԳՈՒԼԻՍ. Զ. Մ. Զ. կը կատարենք յանձնարարութիւնը և հետևանքները նամակով կը յայտնենք։

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Մ. Մ. Ձեր նամակը դեռ չենք կարդացել, որքան էլ լաւ լինի՝ տօներից առաջ շատ դժուար է տպել նիւթի շատութեան պատճառով։

—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. Տ. Ա. Տ. Ա. Հասցէն կը փոխենք։

—ԳԱՆՁԱԿ. Շ. Գրեցէք այդ ձևով. Այն նամակները, որոնք յարմար կը լինեն, կը տպենք։ Ուշադրութիւն դարձրէք օրական հարցերի վրա։

—ԴԱՎՐԵԺ. Մ. Ռ. Փ. Շնորհակալ ենք համակրութեան համար։

Дозволено Цензурою Апрѣля 10 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ